# Արձանագրություն N 2

## Պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2026/2-2 ծածկագրով Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 20-ը հունվարի 2026թ.

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**

Կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Ա. Գալստյան,

**Հանձնաժողովի անդամներ՝**

Կոմիտեի քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի պետ ՝ Ա. Առաքելյան,

Կոմիտեի քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի գլխավոր մասնագետ՝ Գ. Պետրոսյան,

Կոմիտեի քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնի ավագ մասնագետ՝ Մ. Բաբայան:

**Քարտուղար՝**

Կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի գլխավոր մասնագետ Լ. Գևորգյան:

**«ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2026/2-2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2026/2-2 » ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված և Armeps համակարգի կողմից չմերժված հայտերում դիմում-հայտարարությունների առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը:
4. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
5. Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու որոշման մասին
6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

**1.1** Ըստ www.armeps.am կայքի տվյալների՝ Պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար կայքէջերում հայտարարությունների տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2026/2-2» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1 | "Արմենպրես" ՓԲԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝0:*

**2. «ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2026/2-2 » ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Armeps համակարգի միջոցով ներկայացված հայտում հրավերով պահանջված փաստաթղթերի առկայության և դրանց՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

2.1 **Armeps** համակարգի միջոցով ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես «Արմենպրես» ՓԲԸ-ի կողմից ներկայացված լրատվամիջոցների ամսական դիտելիությունը հաստատող փաստաթուղթը տրամադրված է եռամսյակային, սակայն անհրաժեշտ է ներկայացնել յուրաքանչյուր ամսվա տվյալն առանձին՝ համաձայն տեխնիկական բնութագրի 3-րդ կետի (ըստ Google Analytics-ի՝ հայտի ներկայացման օրվան նախորդող 3 ամսվա տվյալ):

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝0:*

**3. Յուրաքանչյուր մասնակիցների առաջարկած գները**

3.1 « ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2026/2-2 » ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում **Armeps** համակարգի կողմից իրականացված հայտերի բացման արդյունքում մասնակիցների գնային առաջարկները.

| **Մասնակցի անվանումը** | ՁԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐ՝ 1<br>*Պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար* ***«կայքէջերում հայտարարությունների տեղադրման ծառայություններ»***<br>**Գնման գինը՝** 2 500 000 | | |
|---|---|---|---|
| | **Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)<br>**/տառերով և թվերով/** | ԱԱՀ**<br>/տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը<br>/տառերով և թվերով/ |
| "Արմենպես" ՓԲԸ | 4 330 000<br>/չորս միլիոն երեք հարյուր երեսուն հազար/ | 866 000<br>/ութ հարյուր վաթսունվեց հազար/ | 5 196 000<br>/հինգ միլիոն հարյուր ինսունվեց հազար/ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**4. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

4.1 ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2026/2-2 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**5. Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու և անհամապատասխանությունները շտկելու որոշման մասին.**

*5.1* « ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2026/2-2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաշվի առնելով սույն արձանագրության 2.1 կետը և հիմք ընդունելով 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 41-րդ կետը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ Արմենպրես ՓԲԸ-ին, առաջարկելով մինչև նիստի կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունները, հակառակ դեպքում մերժել վերը նշված մասնակցի հայտերը հիմք ընդունելով 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 42-րդ կետը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0*

*5.2* « ՊԳԿԿ-ԳՀԾՁԲ-2026/2-2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ էլեկտրոնային եղանակով ծանուցել Արմենպրես ՓԲԸ-ին սույն որոշման մասին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝4 դեմ՝0*

**6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.**

6.1 .Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել 22.01.2026թ. ժամը 15:00.

**Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գալստյան** .....

**Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Առաքելյան** .....

**Գ. Պետրոսյան** .....

**Մ. Բաբայան** .....

**Քարտուղար՝ Լ. Գևորգյան** .....